

Հաստատում եմ՝

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի

Կոլեգիալ կառավարման խորհրդի

թիվ 2 / 05 02 2024 նիստում

խորհրդի նախագահ՝  Ա. Աթոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»  
/պետական ոչ առևտրային կազմակերպություն/**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Ք. Գյումրի  
2024թ.

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 ՀՀ ԿԳՄՍ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի» /այսուհետ՝ ՇՏՊՔ/ մանկավարժական խորհուրդը/այսուհետ՝խորհուրդ/ մանկավարժական միավորում է:

1.2. Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանվում է ՇՏՊՔ-ի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով որը հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. ՇՏՊՔ-ի ղեկավար մարմինների, ստորաբաժանումների,ինչպես նաև կրթական կազմակերպությունների հետ խորհրդի հարաբերությունները կառուցվում են իրավահավասարության, փոխադարձ պայմանավորվածությունների և սույն կանոնակարգի հիման վրա:

## 2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԽՈՐՀՈՒՐԴԸ՝

ա/ Ապահովում է ՇՏՊՔ-ում ուսումնական գործընթացների ծավալումն ու զարգացումը նպաստելով ուսանողների իրավունքների և պարտականությունների անթերի կատարմանը,

բ/ Մասնակցում է ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը,

գ/ Նպաստում է ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ,մշակութային ու հոգևոր զարգացմանը հաստատելով կապեր և գործնական փոխհարաբերություններ ՀՀ-ի և արտերկրի ուսանողական կրթամշակութային այլ կազմակերպությունների հետ,

դ/ Հնարավորության դեպքում իրականացնում է սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր

ե/Նպաստում է ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը

## 3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ՇՏՊՔ-ի մանկավարժական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավար մարմին է, որը կոչված է նպաստելու ուսումնական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

3.2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ՇՏՊՔ-ի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

3.3.Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի մեկը:

3.4.Մանկավարժական խորհուրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենը:

3.5. Մանկավարժական խորհորդի կազմում ընդգրկվում են տնօրենը, տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կուրսղեկները և բոլոր դասախոսները:

3.6. Մանկավարժական խորհորդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն տարին 4-ից 5 անգամ:  
և ըստ անհևաժեշտության:

3.7. Խորհրդի քարտուղարը ընտրվում է բաց քվեարկությամբ՝ ձայների մեծամասնությամբ:

3.8. Խորհրդի ներկայացուցիչներից ՀՀ օրենսդրությամբ և ՇՏՊԲ-ի կանոնադրությամբ նախատեսված կարգով մասնակցում են քոլեջի կառավարմանը:

3.9. Գործառույթները՝

Մանկավարժական խորհուրդը քննարկում է

1/Քոլեջի զարգացման ծրագիրը և հանդես է գալիս առաջարկությամբ,

2/Քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքի շաբաթվա տևողության, աշխատողին խրախուսելու վերաբերյալ հարցերը և առաջարկությունները ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին,

3/Աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններին համապատասխան նոր մասնագիտությունների ներդրման և կոլեգիալ կառավարման խորհրդին ներկայացնելու հարցերը,

4/Քոլեջում բոլոր ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային պլանների քննարկման և հաստատման ներկայացման հարցերը,

5/Մասնագիտական պետական կրթական չափորոշիչին համապատասխան ծրագրերի իրագործման հարցերը,

3.10 Մանկավարժական խորհուրդը ընդունում է որոշումներ.

- Ուսանողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին
- Անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին
- Գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին
- Ավարտական և փոխադրական քննություններին թյուվատրելու մասին
- Ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին
- Փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած հարցերի վերաբերյալ